

“Յիշատիւնս այսմ որսի.”

Փանօք ամենազաւր տէրութեանն Քրիստոսի Աստուծոյ մերո: Որ ետ կարողութիւն տկարոգս՝ Ջաքարիայ մեղապարտ եպիսկոպոսի, պիտակ անուն բանի խնդրողի. հասանել յաւարտ Պատմութեան աշխարհակալին Աղէկսանդրիս: Որ գրեցաւ ի խընդրոյ բազմերջանիկ եւ յոքներանեան, շնորհազարդ եւ բանիբուն վարժապետի Տէր Աստուածատուր պատրիարզին. որ այժմ նստի յաթոռ հայրապետին Յոհաննու Ոսկէբերանին ի Կոստանդինուպուլիսս մեծաշուք պատուով՝ ընկալեալ զիշխանութիւն ի սուրբ Մարտիրոսէն մերմէ: Որ ցանկացող եղեւ այսմ կտակի. ի վայելումն անձին իւրոյ՝ բարետիրի: Եւ յետ աստեացս յիշատակ բարի յեկեղեցի. իւրն եւ ծնողաց իւրոց. հաւրն Եաղուպին. եւ մաւրն Մահապուպին. որոց Տէր Յիսուս Քրիստոս ողորմի. եւ վայելել տացէ զսա ընդ երկայն աւուրս Տէր Աստուածատուր քաւչապետին: Եւ ես թափուրս յամենայն բարեաց զՋաքարիայ մեղապարտ եպիսկոպոսս աշակերտ շնորհազարդ Գրիգորիս կաթուղիկոսին. եւ Յովսէփ վարպետին. որ յայսմ ամի փոխեցաւ ի դասս անմահից. եւ եղեւ ինձ մեծ սուք: Եւ տեսի զփափաք եւ զսէրն Ֆրէրիս մերոյ՝ յանձն առի եւ Աստուծոյ աջողութեամբն կատարեցի. գրով եւ ծաղկեալ ոսկով. եւ երանդ երանդ գունով աւճտեցի սխրալիւր եղբաւրս մեր Տէր Աստուածատուր պրէտիկոսին: Արդ որք հանգիպիք սմա տեսչութեամբ. եւ կամ աւգտութեամբ ինչ իւրք. յիշեցէք ի միտս բարիս եւ ի հայցուածս պատկանաւորս զՏէր Աստուածատուր տեսուչս: Եւ զիս զմեռեալս մեղաք՝ զՋաքարիայ եպիսկոպոսս

մտած է քանի մը անձնութիւն, զոր ուղղեցինք Չեռագրին վրայէն, ըստ լուսանկարին, զոր հոգացած է Guppy գրավաճառն: Չեռագրին մէջ կը գրուէ ԹՂ. 182ա-182բ էջերն: